

ըուածներին անվտանգ դիմանում էր: ԱԵՐՁԱԿԵՍ ԶԻՄԸ ՓԱ-
ԽԱՆ, մի նաւի մէջ իւնգի սկաշտօն ստանձնեց, բայց այն-
պէս չվերադարձաւ, որ աշխարհի մէջ տարակուոած կորչէր,
որ իւր ըուլոր մերձաւորներին խողազութեամբ ննջած դանէր
գերեզմաններում, իսկ իւր հայրենական օջախը՝ որ որ նա
անցուցել էր իւր ոսկի մանկութիւնը՝ բաղեղով վաթաթած,
այլ նա դարձաւ դասաքի պէս հարթած և խոկոյն փակուեցաւ
ոստիկանատան մէջ:

Նա մեծացաւ, ամուսնացաւ, ահագին ընտանիք աճեցրեց
և բազմացրեց, մի դժբաղա օր ըուլորի գլխները ջարդոտեց, յե-
տոյ՝ ամեն տեսակ որակայութիւններով և խացերայութիւննե-
րով՝ հարստացաւ: Հետի նա ամենայն իրաւամբ համարւում է
իւր հայրենիքի ամենապաշտելի արարածը, ամեն տեղ վայելում
է յարդ ու պատիւ, մեծարանք և կառավարութեան բարձր
շրջանում արդէն պատուառ պաշտօն է կատարում:

Ինչպէս տեսնում ես, ընթերցող, մանկական ընթերցա-
ռաններում նկարագրած չար Յակոբներեց և ոչ ոք չի եղել
աշխարհի երեսին, ու այնպէս շարունակ երջանիկ լինէր, ինչ-
պէս այս մեղուառէր կախարդ Զիմը:

Թարգ. Ա. Մ.

ԳՐԱԿԱՆ-ԲԼՈՒՍԻՔԱՆ

ԱՆԻԻ ԱԿԵՐԱԿՆԵՐԸ

(Նարուալութիւն)

V

Ինչպէս ասուեց, բոլոր նիւթերը, որոնք ձեռք են
բերուած պեղումներով, պահւում են տեղումը, թանկարանի
մէջ: Այսիդ համեմատաբար կարճ ժամանակում յաջո-
ղուել է արդէն Անիի կեանքը ընորոշելու համար հաւաքել
շատ բան: Ապարանքի բոլոր քանդակների մասերը — որ
առ այժմ միակ մնացորդներն են աշխարհիկ ընակարան-
ների — մեծ հետաքրքրութիւն են առաջ բերում: Շատ

կարենը կը լինէք լրացնել այդ մասը կահաւորութեան իրերով. բայց պեղումների հետևանքները այդ մասին շատ աղքատ են, բացի մի փոքրիկ քարէ աթոռից (շատ բնորոշ ժամանակակից գարի համար), որը դանուած է աղքատ թաղամասում, և քանդակաւոր փայտեայ թախտի խեղճուկ մնացորդներից, որ մկդակուած է եղել բամբակեայ վերմակով և դորդով ու դուրս է եկել ապարանքում, չէ դանուել ոչինչ. մի դերեզմանում զանուել է գորգի մի ուրիշ կտոր, նկարնելով (ԺԳ. դար), անհամեմատ լաւ պահպանուած:

Հանդերձների մասին վերաբերեալ կարենը զիւտերը եղել են 1908 թուին. դանուած է մետաքսեայ ամբողջ ահպուստ ու լեզու բանուածքներով ու մետաքսով, և ոսկով նուրբ հիւսած քօղ, մետաքսեայ ժապաւէնից դօտի և, արդէն մի քանի անգամ յիշուած, Հոնենց Տիգրանի ազգական փոքրիկ իշխանականեր մի քանի մանր բաներ։ Թէ այս դործուածքը և թէ նոյն Տիգրանի մի ուրիշ ազգականուհու շապիկի մասն դարմացնում են իրանց նուրբ բանուածքով։ Շատ են պղնձէ և արոյրէ (բրոնզ) ապարանջանները, նոյնու և օղակներն ու մատանիները. վերջիններիս մէջ մէկը արծաթեայ՝ զանուած է Անիի ուրիշ տեղերում պեղմունքի ժամանակ։

Պատերազմական զգեստի միակ մնացորդն է կաշիէ շապիկը, որ քաշուած է եղել ոսկու և արծաթի թելերով շատ լաւ բանուած զրահի վերայ։ Զէնքերի առարկաներն էլ շատ չեն։ Մի մեծ սուր (ԺԱ. — ԺԲ. դարերի) եռաժանի տէղ՝ հանգոյցներով, (նոյն ժամանակի), մի քանի նիղակների ծայրեր, և 750-ից աւելի սլաքների ծայրեր (հինգ, եթէ ոչ աւելի, տեսակ) և վերջապէս երկու քորոց իրանց զլիսով։ Պատերազմական տեսակէտից հետաքրքրական է 1910 թուին Աշոտի պարսովի մօտ գըտնուածը, որ մի նիղակաւորի կմախը է. նա ոտքից վիրաւորուած է եղել երկաթեայ զէնքով. նրա մահը տոաջ է եկել քարէ զնոտակից, որը փշրել է դանզի կէսը և մնացել մէջը և ի լրումն այս ամենի՝ զինուորը խաշուել է եռման հեղուկով։ Այս երկորդ զիւտն է Անիում, որ մարդը

չէ թաղուած, իւր կեանքը կարճող, զէնքերի հետ: 1908 թ. Միջնաբերդում գտնուել է մի շատ երիտասարդ մարդու (դուցէ և կնոջ) գանգ, որի մէջ մնացել է ուեզի ծայր, և ճակատի սսկը վերայ ունի խորը կտրուածք: Հաւանական է, որ շատ զէնքեր կը գտնուեն Ամբատի պարսպների տակ, մանուանդ այն աշտարակների, որոնք վաղուց արդէն փուլ են եկած:

Անիում ամենից շատ գտնուածը՝ անօթների մնացորդներն են, ի հարկէ, մեծ մասամբ ոչ ամրող, այլ խեցատներ: Անիի թանկարանը կարող է պարծենալ իւր կաւեղէնի հաւաքածոյով: Կան կաւեղէնների ամեն տեսակները, սովորական կաւեղէններից մինչև շքեղ յաղճաղակին: Հասարակ կուէ ամանների մէջ առանձին հետաքրքրական են զարդարուն մեծ կարասները, նկարէն դօտիներով, որոնք ներկայացնում են երկրաչափական դժեր կամ կենցաղական տեսարաններ: 1910 թուին գտնուել է նոյնպիսի կարասի վերնամասը դօտեղարդով և զոյտ խոշոր առիւծների թափովի, կոպիտ պատկերներով, որոնք միմիանց հանգէպ են դալիս. վերջին հանգամանքը սերտ կապ ունի կովկասի պղնձեայ և արոյրեայ (բրոնզ) կաթսաների հետ:

Զարմանալի են յաղճաղակեայ ամանները իրանց թափանցիկ կողերով և ուռուցիկ ու խոր գծած նկարներով, և ճենապակից ամանները՝ իրանց հարուստ և բազմադաս սկեզօծ ու բազմերանգ նկարներով, նոյնպէս և ուռուցիկ ու ներս ընկած զարդարանքներով (օրնամենտ). Պրանք գտնուած են թագաւորական ապարանքի պեղումներում: Բեկորներից երկում է, որ ամանների մեծագոյն մասը թափովի է, և աշքի են ընկնում թափման (որ հինգ տեսակից աւելի է) բարձր կատարելութեամբ, նոյնպէս և զեղարուեստորէն կատարուած լինելովն ու ներկերի պայմանական թեամբ: Գտնուած ամանների խեցիների թիւը արդէն մի քանի հազարների է հասնում:

Սովորական ամաններից պէտք է առանձին յիշուեն սովորաբար ձուածե ամանները (ԺԱ. — ԺԴ. դարեր), որ ունեն շատ նեղ շրթունք և հաստ ոլտեր, ծածկուած

բազմազան մանր ուռուցիկ զարդարանքներով։ Շատ հաւանական է, որ գրանք արդուղարդի սրուակներ են։ Նրանք պատահում են Առաջաւոր Ասիայի համարեա բոլոր կողմերում, նոյնպէս և Թուրքեատանում։

1910 թուի սկզբումները տուին մեծ թուով նոյնպիսի ամաններ, ընդ ամենը 14 ամբողջ և 250 կոտրուած Այժմ Ասիի այդ ամանների ժողովածուն (24 ամբողջ և մոտ 600 բեկորներ) ամենահարուստներից մէկն է և զեղեցիկ նիւթ է մատակարարում։ Նրանց նշանակութիւնը հետագօտելու, նոյնպէս և այդ առարկանների ինքնատիպ շինուածքի ու տեղի համար։ Անկասկած՝ նրանք Անիումն են շինուել, թէ հիմք չը կայ այդ առարկանների ծաղումն բացառապէս Ասիինը համարել։

Թանկարանում մետաղի ամանների մնացորդներ էլ կան, օրինակ, արոյրէ ձուլած սափոր (Ժ.՝ Ժ.Պ. դ.) լուացուելու համար, սլղնձէ յաւ նկարաքանդակ սափոր (Ժ.Պ. դ.), արոյրէ (բրոնզ) ձուլածոյ ափսէ, հետաքրքրական զարդաքանդակներով (Ժ.Պ. դ.), սլղնձէ սկաւուակ, արծաթէ զաւաթներ, (Ժ.Ա. դ.) ելն։

Տնային կարասիքի ուրիշ առարկաններից շատ դանուած են զանազան կերպի և մեծութեան կաւէ և երկաթէ ճրագակալներ ու խունկ ծխելու ամաններ, և նոյն իսկ կաւէ «կանթեղ» — միջից կէս արած սափոր (բոնձ) պատրոյզի մի քանի տեղերով։ Շատ գտնուած են շերտաւորուած ու նկարէն ապակու բեկորներ, և մինչեւ անգամ մի ամբողջ սրուակ։

Եկեղեցական անօթներից կան մի քանի արժեքաւոր իրեր. գրանց մէջ առաջին տեղը բոնում է սլղնձեայ մեծ ջահը (Ժ.Ա. դ.) Գաղկի տաճարից, թաղի ձևով, չորս կողմից թոշող աղաւնածե ճրագակալներով և թաղի մէջ տեղում բարդ ձեի մի դամբարով։ Այս ջահը ունէր մօտ 120 դոյնզոյն ապակեայ զամբարներ, որոնք մեծ մասմբ դանուած են, բայց բոլորը կոտրտուած։ Իւր շինուածքով և ոճով ջահը մի բացառութիւն է։ Կան շատ հետաքրքրական արոյրեայ բուրվառներ և կանթեղներ

(Գաղիկի տաճարից) աւետարանական պատմութիւնների ձուլածոյ տեսարաններով. և երկու պղնձեայ, կոածոյ շարժական աշտանակներով. ամենից շատ գտնուած են արոյրեայ և պղնձեայ խաչեր (ամրող և կոտրտած). հասարակ և աւելի բարդ զեղարուեստական, ի միջի այլոց մասունքի երկու երեք պահարաններ:

Արժէ յիշել դեռ մի քանի առարկաներ էլ, որոնք վերաբերում են քաղաքի առևտրական ու արդիւնաբերական կեանքին: Այստեղ կան բազմաթիւ քարեայ ծանրաշափեր (բար), հիւսնութեան և անկուածի զանազան գործիքներ են: 1907 թուին գտնուեցին և պղնձեայ մանր իրերի ու զարդերի ամրող արհեստանոցի մնացորդներ: Վերջին պեղումները նոյնպէս տուին այս մասին հետաքրքրական նիւթեր: Դանուած են պղնձաձուրական երկու արհեստանոցների մնացորդներ, քարէ զանազան ձևի բովերով, որոնց մէջ կան սլղնձի հալուածքի հետքեր: Չուլածոյ ամանների մի քանի արհեստանոցներ, զոյնզգոյն զանգուածների համար մի քանի խոշոր կաղապարներով: Յայտնուել է աղիւա թափելու գործարան, կիրառութեան պատրաստի և անպատրաստ առարկաններով ու զանգուածով: Մանաւանդ արժէքաւոր պէտք է համարել քարէ զլանակի մասերը, որով տոլում և դրոշմում էին կատէ մեծ կարասների դօտիների նկարազարդերը: Այս հետաքրքրական է մանաւանդ նրանով, որ իրը անկասկած ճշշդում է հայկական ինքուրոյն ամաններ շինելու ձևն ու տեղը, ամանների, որ մեծ քանակութեամբ գտնում են Ասիում:

Վերջապէս Ասիի երկրազործ դասը թողել է մեզ մի քանի խոփեր, արօրներ, զերանդիներ, և կալսելու կամներ:

Ի հարկ է այս չափազանց համառօտ տեսութեան մէջ անհնարին է մի առ մի յիշել բոլոր առարկանները, որոնցից իւրաքանչիւրը ինքնին հետաքրքրական է, դրանցից շատերի մասին ստիպուած ենք լուսթեամբ անցնել:

Բոլոր յիշատակուած առարկանները սլահպահնուում են թանկարանի առաջին մասում, որ զետեղուած է Մանու-

չէի մղկիթում։ Երկրորդ բաժանմունքը, որ գտնում է յատուի շինութեան մէջ, բովանդակում է ճարտարապետական մասեր, քանդակաւոր քարեր, սրանց մէջ և խաչքարեր, նոյնպէս և արձանագրութիւններ։ Մանաւանդ արձանագրութիւնները Անիում շատ շատ են, զլիստորապէս՝ հայերէնը, կան արարերէն ու պարսկերէն էլ։ Այս ուղղութեամբ պեղումները երեան են համել հարուստ նոր նիւթեր։ Յունարէն արձանագրութիւնը (սկեղ. 1907 և 1908 թուերին), որը յիշուել է, և Արու-Սայիդի ընդարձակ արձանագրութիւնը, (ԺԴ. դարի սկզբին, գրտնուած 1908 թ.), որը մէջ է քերում, ի միջի այլոց, անեցիների մի քանի հարկերի վերացումն՝ թանկարանում պատուաւոր տեղ են բռնում։ Պէտք է յատկապէս յիշել 1910 թ. թանկադին գիւտը, որ վրացերէն մի մեծ արձանագրութիւն է։ Վերաբերելով Անիի ծաղկեալ ժամանակին (1218 թ.), թէև արդէն ոչ մայրաքաղաքի, նա լուսարանում է քաղկեդոնական մասի ընտելիչների յարաբերութիւնը հոգեկորականութեան հետ։ Անիի քաղկեդոնականութեան մասին ընդհանուրապէս դատելու նոր նիւթ է տալիս և բնորոշում է տեղական իշխանութեան նշանակութիւնը։ Վրաց Եպիփան կաթուղիկոսի այս հրովարտակի տակ կայ տեղական հոգեկոր և աշխարհիկ իշխանութիւնների վաւերացումն։ Այս արձանագրութեան գիտական նշանակութիւնը շատ մեծ է և քաղմազան*։

Թանկարանի երրորդ բաժանմունքի ամենալաւ զարդը, որ իւր վերայ է դարձնում ներս մտնողի ուշադրութիւնը, (ինչպէս առաջին բաժանմունքում՝ Գաղիկի արձանն է), է մեծ սալը, մի հեծեալի և երկու հետեակների ուռուցիկ քանդապատկերով, զեղարուեստի մի զերազանց արտադրութիւն է այս. լի ուժով, զեղեցկութեամբ, մանաւանդ ձիու քանդակում, և պէտք է վերագրուի Անիի

* Տես գրքոյկիս վերջումը Յաւելուածը, ուր հայերէն թարգմանութեամբ մէջ են բերուած Արու-Սայիդի պարսկերէն, և վրաց Եպիփան կաթուղիկոսի արձանագրութիւնները մի քանի հարկաւոր ծանօթութիւններով։ Հայ Թարգ.

կեսնքի հնագոյն շրջանին — Կամսարականների տիրապետութեան ժամանակին:

Բայց Անիի պեղումների դիսաւոր հետեանքը այս բոլոր դիւտերը, մանր իրերը և քարէ յիշատակարանները չեն, այլ այն անվիճելի դրութիւնն է, որ չի կարելի Անիի մասին դատել երկրի երեսին դանուած փոքրաթիւ բաներով, այլ պէտք է շատ հետազօտել և փորել, որ ներկայացուի Անին այնպէս՝ ինչպէս էր նա: Այդ դժուարին գործը դիուխ կը հանի Անիի հնախօսական ինստիտուտը, որը հաստատել է կամենում Գիտութիւնների Կայսերական Շեմարանը: Այն ժամանակ ոչ — մասնագետների աշքումն էլ կարդարանան խօսքերը, որոնցով ակադեմիկ ն. Մառը սկսում է իւր զեկուցումն Անիի հնախօսական ինստիտուտի մասին, թէ.

«Կովկասի պարծանքը նրա այն զարդերն ու զանձերն են, որոնցով օժտել է նրան ընութիւնը, նրանցից լաւագոյններին հաւասար կովկասը կարող է պարծենալ երկնքի մի կուլտուրական պարզեցով էլ — Անիի աւելակներով, հնագիտական պսակի՝ իւր այդ խոշոր մարդարիտով»:

ՅԱԻԵԼՈՒԾ

ՎՐԱՅ ԵՊԻՓԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ *

«Աստուածային ձայն տառմ է. «Ճրի տոաք, ճրի տուեք» (Մատթ, Ժ, 8.). այսինքն, տառմ է ձեզ անմահն Աստուած. այն շնորհի համար, ինչ որ ինձնից ստացել էք, ինձ մի բան տուել էք, եւ դուք դեռ վաճառում էք մեծ շնորհը, մինչդեռ այն ձեզ վաճառուած չէ: Եթէ ես ճրի եմ տուել, ձեզ էլ վայել չէ աղօթքը ժողովրդին վաճառել: Եւ տրդ, Անիի քահանաներ, ձեզ եմ դիմում. (Աստուածոյ) խօսքի համար գայթադղութիւն մի լինէք. և ու-

* Извѣстія императорской Академіи Наукъ. Н. Я. Марръ. Надпись Епифанія, Католикоса Грузіи. (Изъ раскопокъ въ Ани. 1910 г.) С. П. Бургъ. 1910.

նայնի ու անցաւորի համար ոտնահար մի անէք առաքելական պատուէրները։ Օրէնքի կատարեալ խախտումն է և ձեր կողմից, ալսակի համար հարիւր «գրամ» 1) ստանալը . . . ով կարողութիւն ունի, թող կերակրի։ այսպէս և մեռեալների համար. եթէ մի բան հարկաւոր է . . . , աւելի հոդու համար հոգս ալէտք կը լինի, այնքան էլ տրուի թիֆլիսի հարիւրից («գրամ») . . . և կերակրի, իսկ բացի դրանից, նայելով կարողութեանը, քահանաները կարող են վեր առնել (կերակուրից բաժին—ոօրույ), Ամեն տուրք, որ անզոսնելի չէ, թող տրուի քահանաներին։ Այս քաղաքում առլուղ վրացիներ, (ալէտք է յիշէք) առաջ դուք ինչպէս շատ յարգում էինք նրանց։ Քահանաներից պահանջւում է ձեր համար աղօթք և ժամասացութիւն, մի տրանջաք ըստ կարի տուրք տալու նրանց։ Ամենից աւելի, ուրախութեամբ, առանց ստիպման տուէք, որովհետեւ Տէրը յօժարակամ նուէրն է սիրում։ Սիրեցէք նրանց, որսկս հոգեոր հայրերի, և նրանք էլ թող սիրեն ձեզ որսկս հոգեոր զաւակների։ Եկեղեցում ժամասացութիւնից մի թերանաք ոչ դուք (քահանաներդ) և ոչ դուք (աշխարհականներդ). այլ ամենից աւելի՝ սլինդ սլահեցէք աստուածային սէրը առ միմեանս, և այսպիսով հատուցէք Աստուծոյ պատուէրներից ամենացանկալին։ Այս գրեցի ես, Եպիփան կաթուղիկոսս, իմ ձեռով, երբ օրհնում էի Ասիի Եկեղեցիները։

Թիֆլիսի այն հարիւր «գրամը» [օրինակատարութեան համար] թող մնան, բայց վճարելով մի «դանդ» երեքի տեղ. ինչ վերաբերում է կովի կաշուն, մինչև այժմ դուք (քահանաներ) ամբողջովին էիք վեր առնում. այսուհետեւ դուք (աշխարհականներ) տուէք նրանց մի միշտ, որ նրանք (ձեր համար) պաշտօն կատարեն։ Եւ մենք ինչու փոխենք եկեղեցական կանոնները։ Ով իմ այս կարգադրութիւնը փոխի, ոչ . . . Աստուծոյ և Նրա սրբերի հրամանը։ Քրօնիկա 438։

Այս արձանագրութիւնը վերջանումէ հայերէն հետեւել վաւերացումով։

«Թվ. ՈԿԵ, Ես տէր Գրիգոր իր[իցալետ եղի]ու[կո]-պու, Ես Վահրամ ամիրայ քաղաքիս վկայենք, որ կա-թաղիկոսին հրամանք եղ»

ՈԿԵ, հայոց թուտկանը, համապատասխան է Փրկչի 1218 թուտկանին:

ԱԲՈՒ-ԱԱՌԻԴԻ ՊԱՐՍԿԵՐԵԼՆ ՀՐՈՂԱՐՏԱԿԸ (ԵԱՌԼԻՒՐ* 2)

1. «Աստուած զիտէ իւր ծառաների (զաղանիքը):
2. «Արու—Սախու Բահատուր-խան:
3. «Եառլիկ (Հրովարտակ): Ներկայումս երկրի երեսի թագաւորի մայրաքաղաքից.
4. «աշխարհի սուլթանի՝ որ փառաւորուած է երկ-րատոր աշխարհից և հաւատից, և որի թագաւորութիւնը (Աստուած) յաւիտենական անի,
5. «Երբ արևելքից արևմուտք աշխարհի բնակիչները դանւում են նրա զթութեան և արդարագատութեան հո-վանու տակ—թող Բարձրեալ Աստուած նրա կարդադրու-թիւններն ու հրամանները աւելի և կարուկ անի,—
6. «Կարդադրութիւնը այս է: Ողովհետեւ երկրի երե-սը հպատակ է նրա հրամանին և զիւանի կարգադրութիւնը նրա զրչի շարժումից կախումն ունի, թող ոչ ոք չհա-մարձակի պակասացնել կամ աւելացնել (մի բան).
7. «Թող ըացի թամղախց 3) և արդարացի հարկերից ուրիշ ոչինչ չառնեն, և ոչ մի մարդուց կալանի 4) նեմերի 5) թարխի 6) և ուրիշների (հարկերի) պատրուակով ոչինչ չը-պահանջեն.
8. «Ինչպէս սրանից տաշջ Անի քաղաքում և Վրաս-տանի այլ գաւառներում տպօրինարար սահմանուած կա-լան և նեմերի (հարկերի) և թարխի բոնի հակառականջու-թեան պատճառով,
9. «բոնութիւն էին տոաջ բերում և զործ զնում»

* Ашійскаясерія № 5 Անոյ. շարք персидская надпись на стенах Ашійской мечети Мануче. С. П. Бургъ. 1911.

(Երկիրը) անասլատ դարձաւ, հասարակ ժողովուրդը ցիր ու ցան եղաւ, քաղաքի և գաւառի աւագները կալան և դռնապիր 7, հարկերի պատճառով

10. «անշարժ կայքերն ու իրանց ընտանիքը թողին ու հեռացան: Գրեցին կարդադրութիւնը (այսպիսի բովանդակութեամբ): Ամենաբարձրեալն Աստուած Բարձրագոյն հովանին (այսինքն Բարձրագոյն պաշտպանութիւնը) (հալատակների) զիխից (չհեռացնի) . . . »

Վ. Բարտոլդ իւր յիշեալ դրօյկի մէջ ասում է. Հրովարտակի վերջը, ուր, հաւանօրէն, ցոյց տրուած կը լինէր նրա հրատարակուելու խոկական թուականը, արձանագրութեան մէջ է բաց թողուած: Այդ պատճառով էլ կարելի է դրա մերձաւոր թիւը որոշել որպէս վերջին կէտ ընդունելով Արու—Սահիդի մահուան օրը, այն է 1335 թ. նոյեմբերի 30-ը: Խանը կովկի կարծիքով Արու—Սահիդը բահատուր տիտղոսը ստացաւ 1319 թուին մայիս յունիս ամիսներում: Աւրեմն հրովարտակը հրատարակուած է 1319—1335 թուերին հաւանօրէն այս միջոցի աւելի երկրորդ կիսին:

Այս հրովարտակից երեսում է, որ բնակիչները քայքայուած լինելով չափազանց հարկերից և ալօրէն հարկահանութիւններից լքանում էին իրանց ստացուածքն ու հեռանում:

Ընդհանուր կարծիք է, որ Անին կործանուեց 1319 թուին երկրաշարժից. բայց փաստերը դավիս են ապացուցանելու, որ Անին յանկարծ չէ կործանուել, այլ բարեկեցութեան նուազելով հետզհետէ աւերակ է դարձել:

Յաճախ պնդում են, ասում է Վ. Բարտոլդ, որ մոնղոլական տիրապետութիւնը Առաջաւոր—Ասիայի համար աւելի կորստարեր է եղել քան մեծ զաղթականութիւնը Եւրոպայի համար: Ասկայն չենք տեսնում որ մոնղոլական արշաւանքը Առաջաւոր—Ասիայում այնպիսի մեծ և տևական աւերմունք հասցրած լինէր: Կիսավայրենի մոնղոլների արշաւանքը սկզբում կարող էր կորստարեր ազդե-

ցութիւն ունենալ իրանց նուածած, բայց քաղաքակրթութեամբ իրանցից ըարձր աղջերի կուլտուրայի վերայ. բայց մոնղոլները շուտով իւրացնում էին տեղական քաղաքակրթութիւնը. Այս բանը մենք տեսնում ենք Արռ-Սահիդի հրովարտակից. Ժողովուրդը կոչւում էր ոայեա, պետք թէ զիւղում և թէ քաղաքում՝ ոայս այժմ ուս. իսկ աւագները, որ մի քանի հոգի էին լինում, — քէղխուղա. (Եր. 42—43). Այս կոչումները այժմ էլ կիրառութեան մէջ են:

Մոնղոլների տիրապետութեան ժամանակ Մեծ-Հայքի հարկը 39 թօման (= 292500 ռ) էր. Այդ ժամանակ Մեծ Հայքի մայրաքաղաքը Ալիսթն էր, Վանայ ծովի ափին. (Եր. 24). Անիի թամդան հաւանօրէն աւելի քիչ էր:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1. Դրամագէտները միայն կարող են մեղ ասել, որ «զրամ»-ը յայտնի ժամանակից սկսած (ԺԲ. դ.) պղնձեայ էր. իսկ առաջ արծաթեայ (Y. Langlois, Essai de classification des suites monétaires de la Géorgie, Փարիզ 1860. Եր. 49): Ինչ յարարերութիւն կար Վրաստանում «զրամ»-ի և «զանզ»-ի մէջ, որ յիշւում է ստորև, յայտնի է. բայց նրանց իսկական արժէքը լիովին բացատրուած չէ. Օրբելեանի-ի բառարանում ասում է «զրամը կշռում է վեց դանգ» «կամ», Ֆ. Ժօրդանի-ի ձեռքին եղած ցուցակով «զարուտան երկու հատի բաշ»: Այս բացատրութիւնը ի նկատի ունելով Օրբելեանին, Ֆ. Ժօրդանիի ԺԱ. Պարի յիշատակարանի ծանօթութեանը աւելացնում է. «հինգ կրկնակ (արծաթ) դանդը մի արագ է», այսպէս նա կարդացել է Աղբուղայի օրէնքի, 1670 թ.—ձեռադիր, ցուցակի յաւելուածի մէջ: Միիթար Գօշի դատաստանագրի համեմատ (ԺԲ. դ) վեց «զանզ»-ը մի «զահեկան» է, մի բանի ցուցակների համեմատ՝ ուկի. իսկ դանդի քաշն է 12 դարեան. (Հրատ. Վահան Վարդապետ Բանտամեանցի, Վաղարշապատ 1880 թ. Եր. 372—379): Ինչպէս հաղորդում է Ի. Ա. Զաւալյանը, որ հին Վրաստանի տնտեսական պատմութեան մասին ուսումնասիրութիւններ ունի, «զանզը» ԺԳ. դարում հաւասար էր սուսական դենդի—7,05 կոպ. Ն. Մառ. Նաճիշ Եպիփանիա, Կատոլիկոսա Հրանտական կառավարութեան մասնաւոր այն հրանտական կուտակութիւնները, որոնք մածուցուած էին լինում քաղաքների, աւան-

2. Եաւլիկ էին կոչում Մոնղոլ խաների մանաւանդ այն հրանտական կուտակութիւնները, որոնք մածուցուած էին լինում քաղաքների, աւան-

ների և զիւղերի մոտ անկած դերաններին և կամ հասարակական հաստատութիւնների որմին վորագրուած, և թուում էին տեղերի հարկերը, յայտնելով պահանջելիքի քանակութիւնը:

3. Թամզա—քաղաքներից առնւող առևարի և արդիւնագործութիւնն հարկի: Թամզա հաւաքող աստիճանաւորները կոչւում էին թաղմաչի: Այս մտքով «Թամզա» համագատասխանում է պարսկական «Բաջ» տերմինին, որը իսլամութեան դեռ առաջին դարերում զործ էին ածում արար զըողները, և բայսարաններում երբեմն նրա հետ նոյնացնում էին «Թամզա» բառը: Բաջ բառը զործ է ածում մեր արձանագրութեան մէջ էլ. ինչպէս երեսում է հայ արձանագրութիւններից այդ բառը զործ էին ածում տեղական բնակիչներն էլ: (Персидская надпись. В. Еартолъдъ. 1911 թ. С. II. Եր. 33—35):—Բաջ-ը Կայ գրականութեան և արձանագրութիւնների մէջ «բաժ» է փոխուել:

4. Կալան—նստակեաց ժողովուրդների հողամասերի հարկ, իսկ կոպչուր արօտատեղինների և արածող անասունների հարկ, որ առնւում էր վրանարնակ խաշնարած ժողովուրդներից: Խաշնք ունեցող նստակեացներից էլ էր առնւում կալան, եթէ նրանք առանձին խաշինք և արօտատեղիններ էին ունենում, (Նոյն. Եր. 30—33):

5. Նեմիրի—արտակարդ տուրք յատկապէս զօրքերի պահպանութեան համար մանաւանդ պատերազմի դէպքերում: Նեմիրի տուրքից ազատ չէին մինչև անգամ արքայական տան անդամներն էլ: (Նոյն Եր. 38—40):

6. Թաւրի—կոչւում էր հոգեոր հաստատութիւններին, յատկացուած տուրքն ու նուէրը. Նոյն անուն էր կրում պետական ամրարին հասցրած ցորեանը, գանձարան մուծուած զրամը, որ նեղ ժամանակին յետ էր տրւում ժողովրդին փոխարինարար: (Նոյն Եր. 40—42):

7. Դոհագիր—այդ անուամբ հաւանօրէն կոչւում էր այն հարկը, որ քաղաքի դոների մօտ յօդուա քաղաքի առնւում էր ներս մուծւող մթերքներից. այդ տեղական տուրք էր, անկախ պետական հարկերից: (Նոյն Եր. 42):

Անիի տուրքերի շարքում Անիի գլխաւոր դոների մօտ հայերէն արձանագրութեան մէջ յիշւում է նաև խասինզու:

Արքայական տանը պատկանող սեպհական կալուածներն ու նրանց վերայ ապրող մարդիկ կոչւում էին «ինջու»,—արարերէն խաս մակղիրի յաւելմամբ—խաս—ինջու: Շշու որոշուած չէ տէրերի ու կալուածքի վերայ ապրողների իրաւարանական յարաբերութիւնը. (Նոյն Եր. 27—30):